Արտատպված է՝ Ի. Ա. Բունին, Վիպակներ և պատմվածքներ, Ե., «Սովետական գրող» հրատարակչություն, 1998. Դորա Եսայանի թարգմանությամբ։

ՏԱՆՅԱՆ

Նա ծառայում էր որպես սպասուհի իր ազգականուհու, մանր կալվածատիրուհի Կազակովայի մոտ, նրա տասնյոթ տարին դեռ նոր պիտի լրանար, փոքրահասակ էր, որ հատկապես նկատելի էր դառնում, երբ թեթևակի շորորալով, փեշը խաղացնելով ու բլուզի տակ փոքրիկ կրծքերը բարձրացրած ման էր գալիս ոտաբոբիկ կամ էլ երբ ձմռանը քայլում էր թաղյակներով, նրա պարզ դեմքը մի քիչ սիրունիկ էր, այդքան միայն, իսկ մոխրագույն գեղջկական աչքերը գեղեցիկ էին միայն ջահելությամբ: Ինքը հեռավոր այն ժամանակներում վատնում էր իրեն, բոլորովին անխոհեմ, թափառական կյանք էր վարում, բազմաթիվ պատահական սիրային հանդիպումներ ու կապեր էր ունենում, և այդպես պատահական էլ վերաբերվեց այդ աղջկա հետ իր կապին...

Աղջիկը շուտով համակերպվեց այն ճակատագրական, զարմանալի բանին, որ հանկարծ կատարվեց իր հետ աշնանային այն գիշեր, մի քանի օր լաց էր լինում, բայց օրըստօրե ավելի ու ավելի համոզվում էր, որ պատահել է ոչ թե դժբախտություն, այլ երջանկություն, որ օրեօր նա իր համար դառնում է ավելի սիրելի, ավելի թանկ. մտերմության

պահերին, որ գնալով ավելի ու ավելի հաճախ էին կրկնվում, նրան ասում էր Պետրուշա ու խոսում այն գիշերվա մասին, ինչպես իրենց նվիրական անցյալի:

Ինքը սկզբում նրան և հավատում էր, և չէր հավատում.

— Մի՞թե դու այն ժամանակ իսկապես չէի՞ր ձևացնում, թե քնած ես:

Բայց նա միայն աչքերն էր զարմանքով չռում.

— Բա դու չէի՞ր զգում, որ ես քնած եմ, բա չգիտե՞ս, թե երեխեքն ու ջահել աղջիկները ոնց են քնում:

— Եթե իմանայի, որ իսկապես քնած ես, ոչ մի դեպքում քեզ չէի դիպչի:

— Էհ, իսկ ես ոչինչ, ոչինչ չէի զգում, համարյա մինչև ամենավերջին րոպեն: Բայց ախր էդ ո՞նց ձեր խելքին փչեց գալ ինձ մոտ: Եկել էիք ու իսկի վրաս չէիք էլ նայում, միայն իրիկունը հարցրեցիք. դու, երևի, նո՞ր ես էստեղ գործի վարձվել, անունդ կարծեմ Տանյա՞ է, ու հետո ինչքան ժամանակ նայում էիք, կարծես վրաս ուշադրություն չէիք էլ դարձնում: Ուրեմն, ձևացնո՞ւմ էիք:

Ինքը պատասխանում էր, որ, իհարկե, ձևացնում էր, բայց ճիշտ չէր ասում. ամեն ինչ իր համար էլ անսպասելի կատարվեց:

Նա աշնան սկիզբն անցկացրեց Ղրիմում և Մոսկվա վերադարձի ճանապարհին մտավ Կազակովայի մոտ, մի երկու շաբաթ ապրեց նրա դաստակերտի հանգստացնող պարզության մեջ, նոյեմբերի սկզբի կարճ օրերին, և արդեն պատրաստվում էր մեկնել: Գյուղին հրաժեշտ տալու այդ օրը նա առավոտից իրիկուն ձին նստած, հրացանն ուսին ու որսի շունը կողքից ման էր գալիս ամայի դաշտերում ու մերկացած անտառներում, ոչինչ չգտավ, վերադարձավ դաստակերտ հոգնած ու քաղցած, ընթրիքին մի տապակ լիքը թթվասերով սարքված մսե կոլոլակ կերավ, մի փոքրիկ ջրաման օղի խմեց և մի քանի բաժակ թեյ, մինչ Կազակովան սովորականի նման խոսում էր իր հանգուցյալ ամուսնու և Օրյոլում ծառայող երկու որդիների մասին: Ժամը տասի մոտերքը

տունն, ինչպես միշտ, արդեն մթության մեջ էր, մոմ էր վառվում միայն հյուրասենյակի ետևում գտնվող առանձնասենյակում, որտեղ ապրում էր ինքը այդտեղ գալիս։

Երբ սենյակ մտավ, աղջիկը մոմը ձեռքին չոքել էր թախտին գցված նրա անկողնու վրա ու վառած մոմը շարժում էր գերանե պատի վրայով: Նրան տեսնելով, աղջիկը մոմը դրեց գիշերասեղանիկին և, թախտից ցած թռչելով, դուրս փախավ:

— Ի՞նչ է պատահել,— ասաց նա զարմացած։— Սպասիր, այստեղ ի՞նչ էիր անում:

— Փայտոջիլ էի վառում,— պատասխանեց աղջիկը արագ շշուկով։— Սկսեցի ձեր անկողինը գցել, մեկ էլ տեսնեմ պատին փայտոջիլ…

Եվ ծիծաղելով դուրս փախավ:

Նա նայեց աղջկա ետևից, ու առանց հանվելու, միայն սապոգները հանելով, պառկեց թախտին գցված մգդկած վերմակին, հույս ունենալով, որ դեռ պիտի ծխի ու մի քիչ էլ միտք անի,— ժամը տասին քուն մտնելն անսովոր էր,— բայց անմիջապես քնեց: Մի պահ արթնացավ, քնի մեջ անհանգստացած մոմի դողդոջ կրակից, փչեց մոմը հանգցրեց, ու անմիջապես էլի քնեց: Իսկ երբ նորից աչքերը բացեց, դեպի բակ նայող երկու պատուհաններից և այգի դուրս եկող անկյունային պատուհանից, լույսով ողողված, աշնանային լիալուսին գիշեր էր, լուռ ու անմարդ, ու իր ամայությամբ սքանչելի: Նա մթի մեջ գտավ թախտի կողքին իր մաշիկները ու գնաց աշխատասենյակի կողքի միջանցք, որպեսզի դուրս գա ետևի սանդուղքից. գիշերվա համար պետքի հարմարանք մոռացել էին դնել նրա սենյակում: Սակայն միջանցքի դուռը փակ էր դրսի կողմից, և նա բակից խորհրդավոր լուսավորված տան միջով քայլեց դեպի շքամուտքը: Այնտեղ էին դուրս գալիս գլխավոր միջանցքով և մեծ գերանակապ նախասենյակով: Այդ նախասենյակում հին սնդուկի վերևի բարձր պատուհանի առջև միջնորմ էր սարքված, որի ետևում անպատուհան սենյակ էր, ուր միշտ ապրում էին սպասուհիները: Միջնորմի դուռը կիսաբաց էր, իսկ դռան հետև մութ էր: Նա լուցկի վառեց ու տեսավ աղջկան քնած: Աղջիկը մեջքի վրա պառկած էր փայտե մահճակալին, միայն մի շապիկ ու բումազեի փեշ հագին, շապիկի տակից երևում էին փոքրիկ կլորիկ կրծքերը, մերկ ոտքերը բացված էին մինչև ծնկները, աջ ձեռքը պարզված

էր դեպի պատը, ու դեմքը բարձի վրա թվում էր մեռած... Լուցկին հանգավ: Նա մի քիչ կանգնեց, ու զգույշ մոտեցավ մահճակալին…

Մութ նախասենյակից դուրս գալով, նա մտածում էր տենդագին.

— Ինչ տարօրինակ է, ինչ անսպասելի: Եվ մի՞թե նա իսկապես քնած էր:

Նա կանգնեց մի քիչ առմուտքին, հետո քայլեց դեպի բակ... Եվ գիշերն էլ մի տեսակ տարօրինակ էր: Ընդարձակ, ամայի, բարձր լուսնով լուսավորված բակ: Դիմացը մարագներն էին հին, քարացած ծղոտով ծածկված, կառքասրահը, ախոռները: Դրանց տանիքներից այն կողմ, հյուսիսային երկնակամարում դանդաղ ցրվում էին գիշերային խորհրդավոր ամպերը՝ մեռյալ ձյունասարերը: Գլխավերևում միայն թեթև սպիտակ ամպեր էին և բարձր լուսինը երևում էր նրանց միջից ադամանդափայլ, ստեպ-ստեպ դուրս գալիս մուգ կապույտ բացվածքները, երկնքի աստղային խորքերը ու ասես ավելի պայծառ լուսավորում տանիքներն ու բակը: Եվ շուրջն ամեն ինչ՝ մի տեսակ տարօրինակ յուր գիշերային գոյության մեջ, օտարացած մարդկային ամեն ինչից, փայլփլում էր աննպատակ: Եվ տարօրինակ էր նաև այն պատճառով, որ թվում էր առաջին անգամ էր նա տեսնում ողջ այդ գիշերային, լուսնի լույսով ողողված աշնանային աշխարհը…

Կառքասրահի մոտ նա նստեց ցեխոտված սայլակառքի ոտնակին: Եղանակը աշնանային տաք էր, այգին բուրում էր աշնանային, գիշերը հանդիսավոր էր, անվրդով ու բարեբեր և մի տեսակ զարմանալիորեն ներդաշնակում էր այն զգացմունքներին, որ նա կրում էր իր մեջ կիսամանուկ կանացի էակի հետ այդ միաձուլումից…

Աղջիկը կամացուկ հեկեկաց, ուշքի գալով ու իբր այդ պահին միայն հասկանալով պատահածը: Բայց միգուցե ոչ իբր, այլ իսկապե՞ս: Աղջկա ողջ մարմինը տրվեց նրան ասես անզգա վիճակում: Նա սկզբում շշուկով արթնացրեց աղջկան. «Լսիր, չվախենաս...»: Աղջիկը չլսեց կամ ձևացրեց, թե

չի լսում: Նա զգուշորեն համբուրեց աղջկա տաք այտը, աղջիկը ոչ մի կերպ չպատասխանեց համբույրին, և ինքը մտածեց, որ նա լուռ իր համաձայնությունն է տալիս այն ամենին, ինչ կարող էր հետևել դրան, նա իրարից հեռացրեց աղջկա ոտքերը, նրանց քնքուշ, այրող տաքությունը, աղջիկը միայն հասցրեց քնի մեջ թույլ ձգվել ու ձեռքը դրեց գլխի տակ…

— Իսկ եթե չէ՞ր ձևացնում,— մտածեց նա, բարձրանալով ոտնակից ու հուզված նայելով գիշերվա մթությանը:

Երբ աղջիկը հեկեկաց, քաղցր ու վշտաբեկ, ինքը ոչ միայն անասնական երախտագիտության զգացումով, այն երջանկության համար, որ նա առանց գիտակցելու պարգևել էր իրեն, այլև հիացմունքով ու սիրով սկսեց համբուրել նրա պարանոցը, կուրծքը, որ արբեցուցիչ բույրն ուներ գեղջկական, աղջկական: Եվ աղջիկը հեկեկալով, հանկարծ պատասխանեց նրան կանացի բնազդային պոռթկումով՝ ամուր ու նույնպես ասես երախտագիտությամբ գրկեց ու իրեն սեղմեց նրա գլուխը: Ով էր նա, աղջիկը դեռ չէր հասկանում իր կիսաքնի մեջ, բայց միևնույն է, դա նա էր, ում հետ ինքը ինչ-որ ժամանակ պետք է միանար առաջին անգամ ամենաթաքուն ու երանելի, սաստիկ մոտիկությամբ:

Ինչպես կարող էր ինքը մեկնելով հիշել նրան միայն պատահաբար, մոռանալ նրա սիրելի անկեղծ ձայնը, նրա մերթ ուրախ, մերթ տխուր, բայց միշտ սիրող, նվիրված աչքերը, ինչպես կարող էր նա սիրել ուրիշներին ու դրանցից ոմանց տալ շատ ավելի մեծ տեղ, քան այդ աղջկան:

Հաջորդ օրը նա ծառայում էր առանց աչքերը բարձրացնելու: Կազակովան հարցրեց.

— Տանյա, քեզ ի՞նչ է պատահել…

Նա խոնարհ պատասխանեց.

— Քի՞չ վիշտ ունեմ, ինչ է, տիրուհի:

Կազակովան ասաց, երբ աղջիկը դուրս եկավ.

— Այո, իհարկե, որբ է, մայր չունի, հայրը մուրացկան, անպետք մարդ է:

Իրիկնամուտին, երբ աղջիկը առմուտքին ինքնաեռն էր գցում, նա ասաց նրան.

— Դու դարդ մի արա, ես քեզ վաղուց էի սիրում: Լաց մի լինի, քեզ մի կոտորի, դրանից օգուտ չկա…

Նա պատասխանեց կամացուկ, արցունքները սրբելով ու ինքնաեռի մեջ վառված տաշեղներ մտցնելով.

— Թե որ իսկականից սիրեիք, էդքան դժվար չէր լինի…

Հետո աղջիկն սկսեց մեկ-մեկ հայացքներ գցել նրան, ասես հայացքով հարցնելով անհամարձակ՝ իսկապե՞ս:

Մի անգամ երեկոյան, երբ աղջիկը ներս մտավ նրա անկողինը գցելու, ինքը մոտեցավ նրան ու գրկեց ուսերը: Աղջիկը վախեցած նայեց նրան և ամբողջապես շիկնելով շշնջաց.

— Հեռացեք, աստծու սիրուն: Մեկ էլ տեսար պառավը ներս կմտնի…

— Ի՞նչ պառավ:

— Պառավ սպասուհին, կարծես չգիտեք:

— Այս գիշեր կգամ մոտդ…

Աղջկա տակն ասես կրակ տային, այնքան որ սարսափում էր պառավից սկզբնական շրջանում.

— Վայ, ի՜նչ եք ասում, ի՜նչ եք ասում: Ես վախից կգժվեմ:

— Լավ, պետք չի, մի վախենա, չեմ գա,— ասաց նա շտապով:

Հիմա աղջիկը ծառայում էր առաջվա նման արագ և հոգատար, նորից սկսել էր մրրիկի պես սուրալ բակից խոհանոց, ինչպես առաջ, և երբեմն, հարմար պահ որսալով, թաքուն հայացքներ էր գցում նրան, հիմա արդեն ամոթխած-ուրախ: Եվ ահա մի առավոտ, լույսը բացվելուն պես, երբ ինքը դեռ քնած էր, աղջկան ուղարկել էին քաղաք գնումներ անելու: Ճաշի ժամանակ Կազակովան ասաց.

— Չգիտեմ ինչ անեմ, կառավարչին բանվորի հետ ուղարկել եմ ջրաղաց, Տանյայի ետևից կայարան ուղարկելու մարդ չկա: Գուցե դո՞ւ գնայիր:

Ինքը, ուրախությունը զսպելով, պատասխանեց կեղծ անտարբերությամբ:

— Ինչ կա որ, սիրով մի քիչ կշրջեմ:

Պառավ սպասուհին, որ մատուցում էր, խոժոռվեց.

— Ինչի՞ եք էդպես բան անում, տիկին, ուզում եք աղջկան խաղք ու խայտառա՞կ անեք: Ախր դրանից հետո նրա մասին ինչ ասես չեն խոսի գյուղով մեկ:

— Խնդրեմ, ինքդ գնա,— ասաց Կազակովան:— Ինչ անի, ոտքո՞վ գա կայարանից:

Ժամը չորսի մոտ նա դուրս եկավ միաձի երկտեղանի կառքով, պառավ բարձր սև զամբիկը լծած, և, վախենալով որ գնացքից չուշանա, գյուղից դուրս գալով ձին քշեց արագ, վեր-վեր թռչելով ցեխոտ, խորդուբորդ սառած ու հետո թացացած ճամփով. վերջին օրերը խոնավ էին, մառախլապատ, իսկ այդ օրը մառախուղը հատկապես թանձր էր. դեռ երբ անցնում էր գյուղի միջով, թվում էր արդեն մթնում է, և խրճիթներում սկսել էին երևալ ծխակարմիր կրակներ, որ մի տեսակ տարօրինակ էին մառախուղի թանձրության պատճառով: Հետո, դաշտում արդեն գրեթե բոլորովին մթնեց ու մառախուղից դարձավ անթափանցիկ: Դիմացից սառը քամի ու թաց մշուշ էր փչում: Սակայն քամին մառախուղը չէր ցրում, ընդհակառակն, ավելի ու ավելի էր խտացնում նրա սառը, մուգ-գորշավուն մշուշը, խեղդում դրանով, դրա հոտավետ խոնավությամբ, ու թվում էր, որ այդ անթափանցելիությունից այն կողմ չկա ոչինչ, որ դա վերջն է աշխարհի, կենդանի ամեն ինչի: Հովարով գլխարկը, չույկան[1], թերթերունքները, բեղերը, ամեն, ամեն ինչ ծածկվել էր մանրիկ ուլունքով: Սև զամբիկը առաջ էր սլանում մեծ-մեծ քայլերով, կառքը վեր-վեր թռչելով սայթաքուն խորդուբորդությունների վրա, ուժեղ ցնցում էր նրան: Նա մի կերպ հաջողացրեց ծխել. գլանակի քաղցր, բուրավետ, տաք մարդկային ծուխը խառնվեց մառախուղի, ուշ աշնան, թաց մերկ դաշտի կուսական հոտին: Եվ գնալով ավելի մթնում, ավելի մռայլ էր դառնում շուրջը: Վերևում և ներքևում արդեն գրեթե ոչինչ չէր երևում, ձիու աղոտ սևին տվող երկար վզից ու սրված ականջներից բացի: Եվ ավելի սաստկանում էր ձիուն մոտ գտնվելու զգացողությունը, միակ կենդանի արարածի այս ամայության մեջ, մեռյալ թշնամականության մեջ այն ամենի, ինչ շրջապատում էր նրան աջից և ձախից, առջևից և ետևից, անիմանալի այն ամենի, ինչ այդքան չարագուշակ կերպով թաքնվում էր իր վրա եկող այս շարունակ թանձրացող ու մթնող մշուշային մթության մեջ…

Երբ մտավ կայարանամերձ գյուղը, հոգին լցվեց բնակավայրի, խղճուկ պատուհանիկներում երևացող նվազ լույսերի, դրանց բերկրալի հարմարավետության ուրախությամբ, իսկ կայարանում՝ կայարանային ամեն ինչը նրան թվաց մի այլ աշխարհի, կենդանի, եռուն, քաղաքային: Դեռ չէր հասցրել ձին կապել, երբ դղրդալով, լուսավորված պատուհանների փայլով կայարան սուրաց գնացքը, քարածխի ծծմբահոտ փչելով: Նա կայարան վազեց այնպիսի ուրախությամբ, ասես սպասում էր ջահել կնոջը, և անմիջապես տեսավ, թե ինչպես դիմացի դռնից ներս մտավ նա քաղաքացու պես հագնված, կայարանի պահակի ետևից, որ քարշ էր տալիս երկու

[1] Տղամարդու մահուդե վերնազգեստ (ծթ.):

պարկ գնումները. կայարանը կեղտոտ էր, նավթավառ ճրագների հոտով լցված, որոնցով լուսավորվում էր, և աղջիկը ուղղակի շողշողում էր խանդավառված աչքերով, արտասովոր ճամփորդությունից հուզված դեմքի ջահելությամբ, և պահակն էլ ինչ-որ բան էր ասում նրան «դուքով»: Ու հանկարծ աղջկա հայացքը հանդիպեց նրան, նա նույնիսկ կանգ առավ շփոթմունքից, սա ի՞նչ բան է, ինչո՞ւ է նա այստեղ:

— Տանյա,— շտապով ասաց նա,— բարև, եկել եմ քո ետևից, ուրիշ մարդ չկար ուղարկելու…

Եղե՞լ է այլևս երբևէ աղջկա կյանքում այդքան երջանիկ երեկո: Նա ինքն է եկել իմ ետևից, իսկ ես գալիս եմ քաղաքից, զուգված-զարդարված եմ ու այնքան սիրուն, որ նա պատկերացնել էլ չէր կարող, տեսնելով ինձ միշտ միայն հին շրջազգեստով, չթե խղճուկ բլուզով, դեմքս ոնց որ մոդայիկ կնոջ դեմք լինի այս մետաքսե սպիտակ գլխարկի տակից, ես նոր բրդյա դարչնագույն զգեստով եմ ու մարհուդե ժակետով, հագիս սպիտակ բամբակյա գուլպաներ են և պղնձե նալիկներով կարճաճիտք կոշիկներ: Ներքուստ ամբողջապես դողալով, նա նրա հետ խոսեց այնպիսի տոնով, ինչպես խոսում են հյուր գալիս, և փեշը թեթևակի բարձրացնելով քայլեց նրա ետևից իսկական տիկնոջ նման՝ մանրիկ քայլերով, ներողամտորեն ասելով. «Օհ, տե՜ր աստված,

ինչքան սոթլիկ է այստեղ, ինչքա՜ն են կոխկրտել գյուղացիք»: Երջանիկ երկյուղից սիրտը մարելով, նա վեր քաշեց զգեստի փեշը սպիտակ մոմլաթե շրջազգեստի վրայից, որպեսզի զգեստի վրա չնստի, բարձրացավ կառք և նստեց նրա կողքին, ինչպես նրան հավասար, մի քիչ ետ քաշվելով ոտքերի մոտ խանգարող պարկերից:

Նա լուռ ձգեց ձիու սանձն ու քշեց գիշերվա ու մառախուղի մթության մեջ, տեղ-տեղ խրճիթներում երևացող ցածրիկ ճրագների կողքից, այս տառապալից գյուղական նոյեմբերյան ճանապարհի դարուփոսերով, և աղջիկը չէր համարձակվում մի խոսք ասել, սարսափելով նրա լռությունից. չլինի՞ զայրացել է ինչ-որ բանից: Նա այդ հասկանում էր և դիտավորյալ լռում: Ու հանկարծ, գյուղից դուրս գալով ու սուզվելով արդեն կատարյալ մթության մեջ, ձիու ընթացքը դանդաղեցրեց, սանձն առավ ձախ ձեռքն ու աջ ձեռքով գրկեց նրա մեջքը սառը թաց ուլունքով պատած ժակետի մեջ, շշնջալով ու ծիծաղելով:

— Տանյա, Տանեչկա…

Եվ աղջիկն ամբողջ էությամբ ձգվեց դեպի նա, սեղմվեց նրա այտին մետաքսե գլխաշորով, քնքուշ, այրվող դեմքով, տաք արցունքով լցված թարթիչներով: Նա գտավ աղջկա ուրախության արցունքներից թաց բերանը և, ձին կանգնեցնելով, երկար չէր կարողանում նրանից պոկվել: Հետո, կույրի նման, ոչինչ չտեսնելով մշուշի ու մթության մեջ, իջավ կառքից, չույկան փռեց գետնին և աղջկան մոտ քաշեց թևքից: Իսկույն ամեն ինչ հասկանալով, աղջիկն անմիջապես ցած թռավ նրա մոտ և արագ ու փութաջան վեր քաշեց իր նվիրական հագուստը, նոր զգեստն ու փեշը, շոշափելով պառկեց չույկային, ընդմիշտ տալով նրան ոչ միայն մարմինը, հիմա արդեն որպես լիակատար սեփականություն, այլև իր ողջ հոգին:

Նա նորից մեկնումը հետաձգեց:

Աղջիկը գիտեր, որ դա իր պատճառով է, տեսնում էր, թե որքան սիրով է իր հետ, խոսում է արդեն որպես տանը իր մտերիմ, թաքուն բարեկամի հետ, ու դադարեց վախենալ նրանից, դողդողալ, երբ նա մոտենում էր իրեն, ինչպես

դողում էր սկզբում: Նա սկսեց իրեն ավելի հանգիստ ու պարզ պահել սիրային պահերին, և աղջիկը արագ հարմարվեց նրան: Աղջիկն ամբողջապես փոխվել էր այնպիսի արագությամբ, ինչպես կարող է միայն ջահելությունը, խաղաղվել էր, դարձել անհոգ-երջանիկ, արդեն հեշտությամբ նրան Պետրուշա էր ասում և երբեմն նույնիսկ ձևացնում էր իբր նա իրեն ձանձրացնում է իր համբույրներով. «Ա՜խ, տեր աստված, ես ձեզնից պրծում չունեմ: Հենց տեսաք մենակ, իսկույն վրա եք տալիս,— և դա աղջկան մի առանձնահատուկ հաճույք էր պատճառում, ուրեմն նա ինձ սիրում է, ուրեմն նա լրիվ իմս է, եթե կարող եմ նրա հետ այսպես խոսել: Ու երջանկություն էր նաև նրա մոտ արտահայտել իր խանդը, իր իրավունքը նրա վրա:

— Փառք աստծու, կալում ոչ մի գործ չկա, թե չէ աղջիկները կլինեին, ու ես ձեզ ցույց կտայի, թե փորձեիք նրանց մոտ գնալ,— ասում էր նա:

Ու ավելացնում, հանկարծ շփոթվելով, ժպտալու հուզիչ փորձ անելով.

— Ինչ է, ես ձեզ հերիք չե՞մ:

Ձմեռը շուտ սկսվեց: Մառախուղներից հետո փչեց հյուսիսային սառը-սառը քամին, սառեցրեց ճամփաների խորդուբորդերը, քարացրեց գետինը, այրեց խոտի մնացորդները այգիներում և բակում: Երկինքը պատեց սպիտակ-արճճագույն թուխպերով, լրիվ մերկացած այգին աղմկում էր անհանգիստ, շտապով, ասես ինչ-որ տեղ էր փախչում, գիշերը սպիտակ լուսինն ուղղակի սուզվում էր ամպաքուլաների մեջ: Դաստակերտն ու գյուղը թվում էին սարսափելի աղքատիկ ու կոպիտ: Հետո սկսեց ձյուն տեղալ, սառած ցեխը սպիտակացնելով ասես շաքարափոշիով, և կալվածքն ու այնտեղից երևացող դաշտերը դարձել էին գորշասպիտակ ու ընդարձակ: Գյուղում ավարտում էին վերջին աշխատանքը՝ նկուղներն էին լցնում ձմեռվա կարտոֆիլը՝ ջոկջկելով, փչացածները շպրտելով: Մի անգամ նա աղվեսամորթուց բաճկոնը հագած, մորթե գլխարկը գլխին գնաց գյուղում շրջելու: Հյուսիսային քամին զզզզում էր բեղերը, այրում այտերը: Ամեն ինչի վրա կախված էր մռայլ երկինքը, գետի մյուս կողմում գտնվող գորշ-սպիտակ թեք դաշտը

թվում էր շատ մոտիկ: Գյուղում խրճիթների շենքերի առջև գետնին քաթանե փռոցներ էին՝ կարտոֆիլի կույտերով: Փռոցների վրա նստած էին աղջիկներ ու կանայք՝ շալերի մեջ փաթաթված, պատռտված բաճկոններով, քրքրված թաղյակներով, ու գործ էին անում կապտած ձեռներով, և նա սարսափով մտածեց. չէ որ նրանց փեշերի տակ բոլորովին մերկ ոտներ են:

Երբ տուն եկավ, աղջիկը նախասենյակում կանգնած շորի կտորով սրբում էր քլթքլթացող ինքնաեռը, որ ներս տանի սեղանին, ու իսկույն ասաց կամացուկ.

— Դուք, երևի, գնացել էիք գյուղ, էնտեղ աղջիկները կարտոֆիլ են ջոկջկում... Ինչ կա որ, ման եկեք, ման եկեք, ձեր համար ավելի լավին ջոկեք:

Ու արցունքները զսպելով, դուրս թռավ միջանցք:

Իրիկվա դեմ առատ, առատ ձյուն տեղաց, ու նրա կողքով սրահ վազ տալով, աղջիկը նայեց նրան անզսպելի մանկական ուրախությամբ ու շշնջաց, հոգու հետ խաղալով.

— Հը, ոնց չէ, հիմի ման կգաք: Մի տեսեք հլա ի՜նչ կլինի, շները բակով մեկ վազվզում են, հիմի էն տեսակ բորան կսկսվի, որ էլ ձեր քիթն էլ տնից դուրս չեք հանի:

— Տե՛ր իմ,— մտածեց նա,— ես ոնց պիտի կարողանամ ուժ ունենալ ու սրան ասել, թե ահա ուր որ է մեկնելու եմ:

Եվ նա սարսափելիորեն ուզեց որքան կարելի է շուտ լինել Մոսկվայում: Սառնամանիք, բուք, հրապարակում՝ Իվերսկայայի դիմաց, զույգ լծված ձիակառքերը զնգզնգացող զանգուլակներով, Տվերսկայայի վրա բարձր լապտերների էլեկտրական լույսը ձյունահողմի մեջ... Մոսկովյան Մեծ թատրոնում շողշողում են ջահերը, լսվում է լարային երաժշտությունը, և ահա ինքը մորթե ձյունոտված վերարկուն դռնապանի ձեռքին զցելով, թաշկինակով սրբելով ձյունից թացացած բեղերը, սովոր, կայտառ ներս է մտնում կարմիր զորգի վրայով մարդաշատ տաքացրած դահլիճ՝ մարդկային ձայների, ուտելիքների և ծխախոտի հոտի մեջ, սպասավորների իրարանցման և այդ ամենը հեղեղող մերթ անառակ-քնքշանվաղ, մերթ քաջարի ու բուռն լարային ալիքների մեջ…

Ընթրիքի ընթացքում նա չէր կարողանում աչքերը բարձրացնել

բացնել ու նայել աղջկա անհոգ վազվզոցին, նրա հանգստացած դեմքին:

Ուշ երեկոյան հագավ թաղյակները, հանգուցյալ Կազակովի ջրարջենու հին մուշտակը, գլխին քաշեց գլխարկն ու ետևի սանդուղքից դուրս եկավ փոթորկի մեջ՝ օդ շնչելու, տեսնելու նրան: Բայց առմուտքի ծածկի տակ արդեն մի հսկայական ձյունաթումբ էր գոյացել, նա սայթաքեց և թևքերի մեջ լիքը ձյուն լցվեց, իսկ հետո արդեն իսկական դժոխք սկսվեց, սպիտակ սուրացող կատաղություն: Նա դժվարությամբ, ձյան մեջ թաղվելով,

պտտվեց տան շուրջը, հասավ մինչև առջևի սանդուղք և ոտքերը դոփելով, վրայի ձյունը թափ տալով ներս վազեց մութ միջանցք, որ գվվում էր փոթորկից, հետո տաք նախասենյակ, ուր սնդուկի վրա մոմ էր վառվում: Աղջիկը դուրս թռավ միջնորմի ետևից ոտաբոբիկ, նույն այն բումազեի շրջազգեստով, ձեռքերն իրար զարկեց.

— Տե՛ր աստված: Էս որտեղի՞ց եք եկել:

Նա մուշտակը և գլխարկը գցեց սնդուկին, այն ամբողջապես ձյունոտելով, ու քնքշանքի խելահեղ բռնկումով գիրկն առավ աղջկան: Աղջիկը նույն հրճվանքով դուրս թռավ նրա գրկից, վերցրեց ավելն ու սկսեց ձյունից մաքրել նրա թաղյակները, հանել ոտքից.

— Տեր աստված, մեջն էլ լիքը ձյուն է: Դուք սարսափելի կմրսեք:

Գիշերը, քնի միջից նա երբեմն լսում էր. աղմկում է միապաղաղ, միապաղաղ ճնշումով տան վրա, հետո վրա է տալիս թափով, թխկթխկոցով ձյունը շփում փակոցափեղկերին՝ ցնցելով դրանք, և թուլանում է, հեռանում, աղմկում քուն բերող աղմուկով... Գիշերը թվում է անվերջանալի ու քաղցր՝ անկողնու տաքությունը, հին տան տաքությունը՝ միայնակ սպիտակ մթի մեջ սուրացող ձյան ծովի մեջ…

Առավոտյան թվաց, թե գիշերային քամին թակոցով բացում է փակոցափեղկերը, խփում դրանք պատերին, բացեց աչքերը՝ ոչ, արդեն լուսացել է և ամեն կողմից ձյունածածկ պատուհաններին է նայում սպիտակ, սպիտակ լույսը, հասնելով

մինչև լուսամուտագոգերին, իսկ առաստաղին փայլում է նրա արտացոլքը: Դեռ աղմկում է, սուրում, բայց ավելի կամաց և արդեն ցերեկային: Թախտի գլխավերևից երևում են դիմացի երկու պատուհանները՝ ժամանակից սևացած մանր վանդակավոր կրկնակի շրջանակներով, երրորդը, գլխավերևից դեպի ձախ, ավելի սպիտակ է և ամենալուսավորը: Առաստաղին նրա սպիտակ անդրադարձումն է, իսկ անկյունում դողդողում է, դռդռում ու ճրթճրթում թեժացող կրակից ներս քաշվող վառարանի բերանակալը. ինչ լավ է, որ նա քնած է եղել, ոչինչ չի լսել, իսկ Տանյան, Տանեչկան, հավատարիմ, սիրելի, բացել է փակոցափեղկերը, հետո կամացուկ ներս է մտել թաղյակներով, սառած, ոտքից-գլուխ ձյունաթաթախ, կանեփաթելից գլխաշորով փաթաթված ծնկի գալով վառել է վառարանը: Ու դեռ չէր հասցրել նա այդ մտածել, երբ ներս մտավ Տանյան սկուտեղով թեյ բերելով, արդեն առանց գլխաշորի: Հազիվ նկատելի ժպտալով, սկուտեղը դնելով նրա կողքին, նայեց նրա առավոտյան պարզ, դեռ քունը չթոթափած ու ասես զարմացած աչքերին.

— Ինչի՞ եք էսքան քնել:

— Ժամը քանի՞սն է:

Աղջիկը նայեց սեղանիկին դրված ժամացույցին և պատասխանեց ոչ անմիջապես. մինչև հիմա դեռ միանգամից չէր կարողանում հասկանալ ժամը.

— Տասը... Իննից տասը պակաս…

Դռանը նայելով, նա աղջկան մոտ քաշեց փեշից բռնելով: Աղջիկը խուսափեց, հեռացրեց նրա ձեռքը.

— Ոչ մի կերպ չի կարելի, բոլորը զարթնել են...

— Ոչինչ, մի րոպե:

— Պառավը ներս կմտնի…

— Ոչ ոք ներս չի մտնի, մի րոպեով:

— Ախ, փորձանք եք գլխիս:

Արագ մեկը մյուսի ետևից թաղյակներից հանելով բրդյա գուլպայով ոտները, պառկեց, հայացքը դռանը... Ա՜խ, այդ գեղջկական բույրը նրա գլխի, շնչառության, այտերի խնձորահամ սառնությունը: Նա զայրացած շշնջաց.

— Դու էլի իրար սեղմած շրթունքներով ես համբուրվում: Երբ պիտի քեզ հետ վարժեցնեմ:

— Ես ազնվական օրիորդ չեմ: Սպասեք, մի քիչ ցած պառկեմ... Դեհ, շուտ, սարսափելի վախենում եմ:

Եվ նրանք նայեցին իրար աչքերի մեջ՝ սևեռուն ու անմիտ, սպասողական:

— Պետրուշա…

— Լռիր: Ինչո՞ւ ես միշտ այս ժամանակ խոսում:

— Ախր էլ երբ ձեզ հետ խոսեմ, թե որ այս ժամանակ չխոսեմ: Էլ շրթունքներս չեմ սեղմի... Դե, երդվեք, որ Մոսկվայում ուրիշ մեկին չունեք…

— Վիզս այդպես մի սեղմիր:

— Ոչ ոք կյանքում ձեզ այսպես չի սիրի: Այ, դուք սիրահարվեցիք ինձ ու կարծես ես ինքս էլ ինձ սիրահարվեցի, ինքս ինձնով հիանում եմ... Բայց որ ինձ թողնեք…

Այրվող դեմքով դուրս թռչելով ետնամուտքից բուք ու բորանի մեջ, նա կանգնած տեղը պպզեց մի պահ, հետո սպիտակ հողմերին ընդառաջ նետվեց դեպի առջևի մուտքը, մերկ ծնկներից վերև ձյան մեջ խրվելով:

Նախասենյակում ինքնաեռի հոտ էր տարածվել: Պառավ սպասուհին ձյունածածկ պատուհանի տակի սնդուկին նստած թեյ էր խմում պնակից, և առանց բերանը պնակից հեռացնելու, խեթ նայեց նրան:

— Էս ո՞ւր ես կորել: Ձյան մեջ թավա՞լ ես տվել:

— Պյոտր Նիկոլանիչին թեյ էի տալիս:

— Էդ ինչ է, նրան ծառաների սենյակո՞ւմ էիր թեյ տալիս, հը՞: Էդ թեյը ես լավ գիտեմ:

— Դեհ, իմանում եք, իմացեք: Տիրուհին վե՞ր է կացել:

— Նո՞ր գլխի ընկար: Շուտ էր պետք:

— Հենց մի գլուխ ջղայնանում եք:

Եվ երջանիկ հառաչելով, նա անցավ միջնորմի ետև, իր գավաթը բերելու, ու հազիվ լսելի երգեց այնտեղ.

Դուրս գամ կանաչ այգիս,

Մտնեմ կանաչ այգիս,

Կանաչ այգում ման գամ,

Իմ սիրածին ձայն տամ...

Ցերեկը, գիրքը ձեռքին աշխատասենյակում նստած, ականջ դնելով նորից նույն մերթ թուլացող, մերթ սպառնալից աղմուկին տան շուրջը, որը գնալով ավելի ու ավելի էր թաղվում ձյան մեջ ամեն կողմից սուրացող կաթնային սպիտակությունից, նա մտածում էր՝ հենց հանդարտվի, կմեկնեմ:

Երեկոյան մի պահ գտավ ու ասաց աղջկան, որ գիշերը ավելի ուշ գա իր մոտ, երբ տանը բոլորը պինդ քնած լինեն, գա ամբողջ գիշեր մնալու, մինչև առավոտ: Աղջիկը գլուխն օրորեց, մտածեց ու ասաց՝ այո: Դա շատ սարսափելի էր, բայց և հաճույքն էր ավելի:

Նույն բանն էր զգում և ինքը: Ու նաև հուզվում էր աղջկա հանդեպ խղճահարությունից. չգիտի որ դա իրենց վերջին գիշերն է:

Գիշերը մեկ քնում էր, մեկ տագնապով արթնանում. սիրտ կանի՞ գալ: Տան մթությունը, աղմուկն այդ մթության մեջ, փակոցափեղկերը շխկշխկում են, վառարանի մեջ շարունակ սուլոց է լսվում... Հանկարծ սարսափով արթնացավ. ոչ թե լսեց, լսել նրան հնարավոր չէր, այնքան որ հանցավոր զգուշավորությամբ էր շարժվում նա տան թանձր մթության մեջ, չլսեց, այլ զգաց, որ նա, անտեսանելի, արդեն կանգնած է թախտի մոտ: Նա ձեռքերը պարզեց: Աղջիկը լուռ մտավ նրա վերմակի տակ: Լսում էր, ինչպես է խփում աղջկա սիրտը, զգում նրա սառած բոբիկ ոտքերը ու շշնջում էր ամենաջերմ խոսքերը, որ միտն էր գալիս ու կարող էր ասել:

Նրանք երկար պառկած էին այդպես, կուրծք կրծքի, համբուրվելով այնքան ամուր, որ ատամները ցավում էին: Աղջիկը հիշում էր, որ նա ասել է բերանը չսեղմել և ջանալով կատարել նրա կամքը, բացում էր բերանը ծտի նման:

— Դու երևի իսկի՞ չես քնել:

Աղջիկը պատասխանեց ուրախ շշուկով:

— Ոչ մի րոպե: Սպասում էի…

Սեղանիկի վրա շոշափելով նա գտավ լուցկին, վառեց մոմը: Աղջիկը սարսափած ասաց.

— Պետրուշա, ի՞նչ եք անում: Բա որ պառավը զարթնի, տեսնի լույսը…

— Գրողի ծոցը թող գնա,— ասաց նա, նայելով աղջկա կարմրած դեմքին:— Գրողի ծոցը թող գնա, ուզում եմ քեզ տեսնել…

Տիրելով նրան, նա աչքը չէր կտրում նրանից: Աղջիկը շշնջաց.

— Վախենում եմ, ինչի՞ եք այդպես նայում վրաս:

— Նրա համար, որ աշխարհում քեզնից լավը չկա: Այս գլխիկը փոքրիկ հյուսքը շուրջը փաթաթված, ինչպես երիտասարդ Վեներան…

Աղջկա աչքերը փայլեցին խինդով, երջանկությամբ:

— Դա ի՞նչ Վեներա է:

— Կա այդ տեսակ... Եվ այս պստիկ շապիկը…

— Իսկ դուք ինձ համար միտկալից առեք... Երևում է, ինձ իսկականից շատ եք սիրում:

— Բոլորովին չեմ սիրում: Ու նորից քեզնից չգիտեմ լորիկի, թե չորացած վուշի բուրմունք եմ զգում…

— Իսկ ինչի՞ է դա ձեզ դուր գալիս: Այ, դուք ասում էիք, որ ես միշտ խոսում եմ այդ ժամանակ... իսկ հիմի... ինքներդ եք խոսում…

Աղջիկն սկսեց նրան ավելի ամուր սեղմվել, ուզում էր էլի ինչ-որ բան ասել և արդեն չկարողացավ…

Հետո նա հանգցրեց մոմը և երկար պառկած էր լուռ, ծխում էր ու մտածում. համենայն դեպս պետք է ասել, սարսափելի է, բայց պետք է: Ու հազիվ լսելի սկսեց.

— Տանեչկա…

— Ի՞նչ,— նույնպես խորհրդավոր հարցրեց նա:

— Ախր ես պետք է մեկնեմ…

Աղջիկը տեղից նույնիսկ բարձրացավ.

— Ե՞րբ:

— Երևի շուտով... շատ շուտով... Ես անհետաձգելի գործեր ունեմ …

Աղջիկն ընկավ բարձին.

— Տե՛ր աստված:

Նրա ինչ-որ գործերը, ինչ-որ մի տեղ, ինչ-որ Մոսկվայում, աղջկան մի տեսակ ակնածանք էին ներշնչում: Բայց և ինչպե՞ս բաժանվեին այդ գործերի պատճառով: Ու նա լռեց, շտապով ու անզոր կերպով մտքում ելք որոնելով այդ

անհաղթահարելի սարսափից: Ելք չկար: Ուզում էր բղավել. «Ինձ էլ ձեզ հետ տարեք»: Բայց չէր համարձակվում. մի՞թե դա հնարավոր է:

— Հո չեմ կարող ամբողջ կյանքումս այստեղ ապրել…

Աղջիկը լսում էր ու համաձայնում, այո, այո…

— Հո չեմ կարող քեզ հետս տանել…

Աղջիկը հանկարծ հուսահատությամբ ասաց.

— Ինչո՞ւ:

Նա արագ մտածեց. «Այո, ինչո՞ւ, ինչո՞ւ»: Եվ շտապով պատասխանեց.

— Ես տուն չունեմ, Տանյա, ամբողջ կյանքում տեղից տեղ եմ գնում.— Մոսկվայում ապրում եմ հյուրանոցում... Եվ ոչ մեկի հետ երբեք չեմ ամուսնանա…

— Ինչո՞ւ:

— Նրա համար, որ այդ տեսակ մարդ եմ:

— Եվ ոչ մեկի հետ երբեք չե՞ք ամուսնանս:

— Ոչ մեկի հետ, երբեք: Քեզ ազնիվ խոսք եմ տալիս, իսկապես, երդվում եմ, ինձ անհրաժեշտ է մեկնել, շատ կարևոր և անհետաձգելի գործեր ունեմ: Ծննդյան տոներին անպայման կգամ:

Աղջիկը գլուխը դրեց նրա ուսին, պառկեց, տաք արցունք էր թափում նրա ձեռներին ու շշնջում.

— Դեհ, ես գնամ... Շուտով կսկսի լուսանալ…

Ու տեղից վեր կենալով, մթության մեջ սկսեց նրան խաչակնքել.

— Թող երկնային տիրուհին, մեր տիրամայրը ձեզ պահապան լինի…

Իր միջնորմի ետև վազ տալով, նա նստեց անկողնին ու ձեռները կրծքին սեղմած, շրթունքներից արցունքները լիզելով, սկսեց շշնջալ միջանցքից լսվող բուքի աղմուկի տակ.

— Տե՛ր աստված: Երկնավոր տիրուհի: Տեր իմ, այնպես արա, որ գոնե մի երկու օր էլ բուք լինի:

Երկու օրից նա մեկնեց, դրսում դեռ չէին հանդարտվել ձյունահողմերը, բայց նա այլևս չէր կարող երկարաձգել աղջկա և իր թաքուն տառապանքը, ու չենթարկվեց Կազակովայի հորդորներին՝ սպասելու մինչև հաջորդ օր:

Եվ տունը, և դաստակերտն ամայացան, մահացան: Ու պատկերացնել Մոսկվան, նրան այնտեղ, նրա կյանքն այնտեղ, նրա ինչ-որ գործերը, պարզապես անհնարին էր:

Ծնունդին նա չեկավ: Ի՜նչ օրեր էին դրանք: Ապարդյուն սպասումի ինչպիսի տառապանքի, ինքն իր առջև ինչ ողորմելի կեղծության մեջ էր անցնում ժամանակն առավոտից մինչև երեկո, երբ նա ձևացնում էր իբր ոչնչի էլ չի սպասում: Եվ Ծննդյան տոնի բոլոր այդ օրերին աղջիկը հագնում էր այն զգեստն ու այն կիսակոշիկները, որ հագին էին, երբ նա դիմավորեց իրեն այն ժամանակ՝ աշնանը, կայարանում, այն անմոռանալի իրիկուն:

Ջրօրհնեքին չգիտես ինչու մեծ փափագով հավատում էր, որ ահա ուր որ է բլրի ետևից կերևա գյուղացու սահնակը, որ նա կվարձի կայարանում նամակ չուղարկելով, որ իր ետևից ձի ուղարկեն, այդպես ամբողջ օրը վեր չկացավ նախասենյակի սնդուկից, աչքը բակից չկտրելով: Տունը դատարկ էր. Կազակովան հյուր էր գնացել հարևաններին, պառավը ճաշում էր ծառաների սենյակում, նստել էր այնտեղ և ճաշից հետո՝ հաճույքով չարախոսելով խոհարարուհու հետ: Իսկ աղջիկը նույնիսկ ճաշելու չէր գնացել, ասել էր, որ փորը ցավում է…

Բայց ահա սկսեց մթնել: Աղջիկը մի անգամ էլ նայեց փայլուն ձյունաշերտով ծածկված ամայի բակին, հաստատ ասելով ինքն իրեն՝ վերջ, այլևս ոչ ոք ինձ պետք չէ, ոչնչի չեմ ուզում սպասել, ու այդպես զուգված, զբոսնողի քայլքով անցավ սրահով, հյուրասենյակով, պատուհանից ներս ընկած ձմեռային դեղին վերջալույսով ողողված, ու երգեց բարձր ու անհոգ, վերջացած կյանքի թեթևացումով,

Դուրս գամ կանաչ այգին,

Մտնեմ կանաչ այգին,

Կանաչ այգում ման գամ,

Իմ սիրածին ձայն տամ…

Ու սիրածի մասին այդ խոսքի վրա հենց մտավ առանձնասենյակ, տեսավ նրա դատարկ թախտը, գրասեղանի մոտի դատարկ բազկաթոռը, որին նա նստում էր գիրքը ձեռքն

առած, և ընկավ այդ բազկաթոռին, գլուխը գցեց սեղանին հեկեկալով ու բղավելով. «Երկնային տիրուհի, մահ տուր ինձ»:

Նա եկավ փետրվարին, երբ աղջիկը արդեն իր մեջ լրիվ մեռցրել էր նրան կյանքում գեթ մի անգամ նորից տեսնելու հույսը:

Ու կարծես նորից ամեն ինչ վերսկսվեց.

Նա ապշած էր մնացել, տեսնելով աղջկան, այնքան որ սա նիհարել ու խամրել էր ամբողջապես, այնքան երկչոտ ու տխուր էին նրա աչքերը: Զարմացել էր և աղջիկը. առաջին պահին նա էլ աղջկան թվաց մի տեսակ ուրիշ, ծերացած, օտար և նույնիսկ տհաճ. բեղերը կարծես ավելի մեծ էին, ձայնն ավելի կոպիտ էր դարձել, նրա ծիծաղն ու խոսելը, մինչ հանվում էր նախասենյակում, չափազանց բարձր էին ու անբնական, աղջիկը անհարմար էր զգում նայել նրա աչքերին... Բայց երկուսն էլ ջանում էին թաքցնել այդ մեկը մյուսից, ու շուտով ամեն ինչ ընթացավ կարծես առաջվա նման:

Հետո նորից սկսեց մոտենալ սարսափելի ժամանակը՝ նրա նոր մեկնումի ժամանակը: Նա սրբապատկերի առջև երդվեց աղջկան, որ զատիկին կգա ու կմնա ամբողջ ամառ: Աղջիկը հավատաց, բայց մտածեց. «Իսկ ամռանը ի՞նչ կլինի: Նորից նույնը, ինչ հիմա՞»: Հիմա արդեն այդքանը քիչ էր նրա համար՝ կամ լիովին, լիովին նախկինը, այլ ոչ թե դրա կրկնությունը, կամ էլ նրա հետ մշտական կյանք, առանց բաժանումների, առանց նոր տառապանքների, առանց զուր սպասման ամոթի: Բայց նա ջանում էր վանել իրենից այդ միտքը, ջանում էր պատկերացնել ամառային այն համակ երջանկությունը, երբ իրենք այնքան ազատություն էին ունենալու ամենուրեք...— գիշեր ու ցերեկ, այգում, դաշտում, կալում, և նա երկար, երկար կլինի իր հետ…

Նրա նոր մեկնումի նախօրեին գիշերն արդեն նախագարնանային էր, լուսավոր ու քամոտ: Տան ետև ալեկոծվում էր այգին ու այնտեղից շարունակ քամու հետ նրանց էր հասնում շների չոր ու խղճալի, ընդհատուն հաչոցը եղևնուտի միջի փոսի գլխին, այդ փոսի մեջ աղվես էր, որ բռնել էր

թակարդով ու աղայական տուն էր բերել Կազակովայի անտառապահը:

Նա պառկել էր մեջքի վրա թախտին, աչքերը փակ: Աղջիկն էլ նրա կողքին, կողքի վրա, ձեռքը տխուր գլխիկի տակ: Երկուսն էլ լռում էին: Վերջապես աղջիկը շշնջաց.

— Պետրուշա, քնա՞ծ եք:

Նա բացեց աչքերը, նայեց սենյակի կիսամթին, ձախից լուսավորված կողմնային պատուհանից թափանցող ոսկե գույն լույսով.

— Ոչ, ի՞նչ է:

— Ախր դուք ինձ էլ չեք սիրում, զուր կործանեցիք,— հանգիստ ասաց աղջիկը:

— Ինչո՞ւ զուր: Հիմար բաներ չասես:

— Մեղք առաք վրաներդ: Հիմի ես գլուխս առնեմ ո՞ւր կորչեմ:

— Իսկ ինչո՞ւ պիտի գլուխդ առնես կորչես:

— Հիմի դուք նորից, նորից կգնաք ձեր այդ Մոսկվան, իսկ ես ի՞նչ եմ անելու էստեղ մենակ:

— Ինչ որ առաջ էիր անում: Իսկ հետո, չէ որ քեզ հաստատ ասացի՝ զատիկին կգամ ու կմնամ ամբողջ ամառ:

— Հա, միգուցե և կգաք... Մենակ թե դուք առաջ ինձ էդտեսակ բան չէիք ասի... «Իսկ ինչո՞ւ պիտի գլուխդ առնես կորչես»: Դուք ինձ իսկապես սիրում էիք, ասում էիք, որ ինձնից լավը չեք տեսել: Եվ ես էլ բա հիմիկվա նմա՞ն էի:

Այո, այդպիսին չէր, մտածեց նա: Սարսափելի փոխվել է, ամեն ինչով…

— Անցավ իմ ժամանակը,— ասաց աղջիկը:— Ներս էի ընկնում, պատահում էր, ձեզ մոտ՝ և սարսափելի վախենում էի, և ուրախանում: Փառք աստծո, պառավը քնած է: Իսկ հիմի նրանից էլ չեմ վախենում…

Նա ուսերը թոթվեց.

— Ես քեզ չեմ հասկանում: Հապա մի գլանակս տուր սեղանիկի վրայից…

Աղջիկը տվեց: Նա ծխեց:

— Չեմ հասկանում, քեզ հետ ի՞նչ է կատարվում: Դու պարզապես անառողջ ես…

— Այ դրա համար էլ երևի սիրելի չեմ ձեզ համար: Իսկ ինչո՞վ եմ ես հիվանդ:

— Ինձ չես հասկանում: Ես ասում եմ, որ դու հոգեպես անառողջ ես: Թե չէ, մի ինքդ մտածիր, ի՞նչ է պատահել, ինչի՞ց ես ենթադրել, որ քեզ այլևս չեմ սիրում: Եվ ինչո՞ւ ես շարունակ նույն բանը կրկնում՝ պատահում էր, պատահում էր...

Աղջիկը չպատասխանեց: Պատուհանը լուսավորվում էր, այգին աղմկում, նրանց էր հասնում կերկերուն, չոր, հոսակտուր, լալագին հաչոցը... Աղջիկը կամացուկ իջավ թախտից թևքը աչքերին սեղմած, գլուխը ցնցելով, իր բրդյա գուլպաներով փափուկ քայլեց դեպի հյուրասենյակի դուռը: Նա կամացուկ և խիստ ձայն տվեց աղջկան.

— Տա՛նյա:

Աղջիկը շրջվեց, պատասխանեց հազիվ լսելի.

— Ի՞նչ եք ուզում:

— Ինձ մոտ եկ:

— Ինչո՞ւ:

— Ասում եմ, եկ:

Աղջիկը հլու-հնազանդ մոտեցավ, գլուխը կախ զցած, որ նա չտեսնի արցունքով ողողված դեմքը:

— Ասեք, ի՞նչ եք ուզում:

— Նստիր և լաց մի լինի: Համբուրիր ինձ, դեհ:

Նա նստեց, աղջիկը նստեց կողքին և գրկեց նրան, անձայն հեկեկալով. «Տե՛ր աստված, ես ինչ անեմ,— հուսահատված մտածում էր նա:— Նորից այս տաք մանկական արցունքները մանկական վառվող դեմքին... Նա չի էլ հասկանում, թե ինչքան եմ իրեն սիրում: Բայց ի՞նչ կարող եմ անել: Տանե՞մ նրան հետս: Ո՞ւր: Ի՞նչ կյանքի: Եվ ի՞նչ դուրս կգա դրանից: Կապեմ ինձ և կյանքս կործանե՞մ ընդմիշտ»: Ու սկսեց շշնջալ արագ-արագ, զգալով ինչպես իր արցունքներն էլ սկսեցին խտղտացնել քիթը և շրթունքները:

— Տանեչկա, իմ ուրախություն, լաց մի լինիր, լսիր ինձ, գարնանը ես կգամ ու կմնամ ամբողջ ամառ, ու այն ժամանակ կգնանք ես ու դու քո «կանաչ այգին»,— ես լսել եմ քո այդ երգը ու երբեք չեմ մոռանա,— կգնանք սայլով անտառ, հիշո՞ւմ ես ինչպես էինք վերադառնում կայարանից:

— Ոչ ոք ինձ քեզ հետ չի թողնի,— դառնորեն շշնջաց նա, գլուխը թափահարելով նրա կրծքին, առաջին անգամ նրան «դու» ասելով:— Եվ դու ոչ մի տեղ չես գնա ինձ հետ...

Բայց նա արդեն աղջկա ձայնի մեջ թույլ ուրախություն, հույս էր լսում:

— Կգնամ, կգնամ, Տանեչկա: Ու չհամարձակվես ինձ այլևս «դուք» ասել: Ու չհամարձակվես լաց լինել...

Նա գրկեց նրա գուլպայով ոտքերը, բարձրացրեց թեթև մարմինը ու նստեցրեց իր ծնկին.

— Դեհ ասա. «Պետրուշա, ես քեզ շատ եմ սիրում»:

Աղջիկը բութ կրկնեց, արցունքներից զկոտալով.

— Ես քեզ շատ եմ սիրում...

Դա փետրվարին էր սարսափելի տասնյոթ թվականի: Եվ նա գյուղում էր վերջին անգամ իր կյանքում:

22 հոկտեմբերի 1940